

1973

Երեմ Կեպիկ

84

Ե-83

Թիֆլիս

1896

Af 749

2003

2011

... 2000 ... 1912

ՎԵՐԻՔ - ԱՊՐԵՐԻՔ
#749

ԵՐԵՔ ՎԵՐԻՔ



1631

84
36-83

W A749.

ԵՐԵՔ ՎԷՊԻԿ



5184
38

P

Թարգմանչ
Լեւոն Մելիք-Աղամանյ



1631

Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպ. Յ. Մարտիրոսյանցի. | Тип. И. Мартиросианца

Орбеліановская ул., д. № 1 | 2.

1896

456

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՏ

Ֆրանսիական հին առասպել:

Дозволено цензурою. Тифлисъ, 14 октября 1895 г.

Յրիտասարդի մէկը սիրահարվում է մի ջահէլ աղջկայ վրայ:

Այդ աղջիկը թէև շատ սիրուն, բայց տուտուց — թեթևասօղիկ և քարասրտի մէկն է լինում:

Մի գիշեր այդ աղջիկը երազ է տեսնում, որ ինքը, իբր թէ, միշտ ջահէլ ու աչգպէս սիրուն կըմնայ, և մինչև անգամ էլ աւելի կը սիրունանայ, եթէ որ իւր սենեակում մի արկղի մէջ պահած ունեւնայ ան կնոջ սիրտը, որ աշխարհ է բերել է իւր սիրեցեային:

Եւ աղջիկն ասում է իւր սիրահարին.

«Գնա՛, սպանիր մօրդ, կրճքից դուրս կորզիր նրա սիրտը և բեր ի՛նձ տուր»:

Երիտասարդը սարսափով նայում է իւր սիրուհու երեսին և նրանից՝ հեռո՛ւ, հեռո՛ւ փախչում:

Բայց հետեւեալ օրը վերադառնում է իւր աննմանի մօտ, և նա կրկին ասում է երիտասարդին.

—Գնա՛, սպանիր մօրդ, կրճքից դուրս կորզիր նրա սիրտը և բեր ի՛նձ տուր... որպէսզի յաւիտեան սիրեմ քեզ և միշտ էլ այսպէս սիրուն ու ջահէլ մնամ:

—Ո՛հ, մի՛, այդպիսի սարսափելի բան մի պահանջիր ինձանից,—բացագանչում է երիտասարդը:

Սակայն օրիորդը փարվում է երիտասարդի վզովը, համբուրում-մամբուրում է նրան և մի-և-ևնոյն ժամանակ շշնջում նրա ականջին.

«Դէ արա՛ այդ բանը. կատարի՛ր ինչ որ ասում եմ»:

Իսկ երիտասարդը դուրս է ընկնում իւր սիրուհու գրկից ու կրկին փախչում՝ դէպի ուր որ աչքը կտրում է...

Միւս օրը նա նորից գալիս է սիրած աղջկայ մօտ, բայց այդ սիրուած աղջիկը դարձեալ մի-և-ևնոյն բանն է պահանջում իւր սիրահարից.

—Դէ գնա՛, սպանիր մօրդ, կրճքից դուրս կորզիր նրա սիրտը և բեր ի՛նձ տուր. ահա միայն այն ժամանակ յաւիտեան կըսիրեմ քեզ, միայն այն ժամանակ այսպէս ջահէլ, սիրուն և երջանիկ կըմնամ ես:

—Ո՛հ, բաւական է, դադար տուր,—թախանձում է երիտասարդը:

—Լաւ. եթէ այդպէս է, եթէ դու չես կամենում կամքս կատարել, ուրեմն ես ուրիշին կըսիրեմ, և անշուշտ այդ ուրիշը ամեն բան կ'անէ խաթերս համար, իմ սիրոյ համար,—ասում է օրիորդը և երեսը շրջում երիտասարդից:

Երիտասարդը՝ որպէս խելակորոյս թափառում է ամբողջ օրը, ինքն էլ չհասկանալով իւր

արածը կամ որտեղ լինելը. և երբ մութն ընկնում է, շտապում է տուն և կատարում այն՝ ինչ-որ իրանից պահանջում էր իւր սիրեցեալը....

Ու երբ՝ գիշերային մթութեան մէջ, ամբողջ մարմնով դողալով, երիտասարդն շտապում է դէպի իւր սիրած աղջիկը, դաշթում է և վաչր ընկնում.... Նոյն միջոցին, երբ նա ծանր հառաչով ուզում էր ոտքի կանգնել, մօր արիւննաթաթախ սիրտը՝ յուզուած, մորմոքած և մալրական խանդակաթ ձայնով հարցնում է.

—Ա՛հ, հօ չվնասուեցիր. մի տեղդ հօ չցաւեց, զաւակ՛ս....

Դ ա լ ի Թ Գ է չ ի



Ա Ռ Ա Ն Ջ Ի Ն

Վէպիկ:

Անդորր զրուցատրութեան ժամին երբ տեղի է տալիս բուռն կիրքը, երբ խոստովանութիւնն ինքն իրան բղիսում է մարդու սրտից, երբ անսպասելի սրտաբացութիւնից առաջացած անկեղծութեան թոպէներին բարեկամութիւնն աւելի քնքուշ և աւելի սրտազին է լինում,— Փլաւիան մեծ յօժարութեամբ խօսում էր իւր մանկութեան մասին—այն ուրախ, անհոգ ժամանակի մասին, երբ ամեն ինչ արեզ է, ամեն ինչ փաշփաշանք, ուրախութիւն.... Այդ յիշողութիւններից նրա սիրտը մի տեսակ հրճուանքով էր լցվում. հէնց այժմ էլ Փլաւիան մտքի ծովն ընկած երազում էր հեռուն գիտելով և

յուզուած ձայնով խօսում էր դարձեալ նոյն քնքշութիւնների, նոյն փաշփաշանքների մասին, որոնցով շրջապատում էր նրան մայրական սէրը: Եւ մէկ էլ՝ անսպասելի կերպով այս ողբերկութիւնը տեղի տուաւ խորին տխրութեան. նրա ձայնն սկսեց հնչել մի տեսակ խուլ կերպով, և Ֆլաւիան հազիւ լսելի ձայնով շշնջաց. «Մայր իմ... մայր իմ...»:

Եւ կարծես ուզենալով ազատուել իրան ճրնշող այդ ծանր մտքերից, նա բռնեց Ձեզարէի ձեռքը և նայելով նրա աչքերին, ասաց.

—Թէ արեդ կըսիրես, մի բան պատմիր ինձ քո մասին:

Ձեզարէն ժպտաց և շարունակեց իւր սիգարի ծխելը՝ իբրեւ մի հանգիստ և կեանքից զոհ մարդ:

—Ես շատ ուժեղ, շատ կուռարար, շատ դիւրագրգիռ մի երեխայ էի, սիրուն ջան: Այս է բոլորը:

—Էլ ուրիշ ոչինչ:

—Ոչինչ, սիրելիս:

—Եթէ այդպէս է,—ասաց Ֆլաւիան, գլուխը խոնարհելով,—ուրեմն պատմիր ինձ քո որդու մասին:

Մի վաղկեան Ձեզարէի դէմքը լուրջ կերպարանք ստացաւ. նա ուշիուշով դիտեց Ֆլաւիային՝ կարծես մի բան կասկածելով: Սակայն Ֆլաւիայի աչքերի մէջ նա կարդաց անքան երկչոտ հետաքրքրութիւն, անքան սրտագին կարեկցութիւն, որ իսկոյն փարատուեց նրա կասկածը: Ապա բաղդաւոր հօր հպարտ ժպիտով նա սկսեց խօսել իւր որդու մասին, որին կոչում են՝ պապի անունով Պաօլօ, և որ այլևս չի կամենում որ ԵՅԵ (պուճուր) ասեն իրան, որովհետեւ ինքն այժմ մեծ տղայ է, արդէն տասը տարեկան է:

—Նրա մազերն էլ շէկ են քոնի պէս, հարցնում է Ֆլաւիան ուշադրութեամբ լսելով նրան:

—Այո, շէկ և գանգուր: Նա բարկանում է, երբ նրան ասում եմ՝ մազերդ կեղծ են: Նա շատ

գիւրազգած է գէպի ծաղրը. տանել չի կարող, երբ նրա հետ կպտակ են անում: Այդ ժամանակ նա բոլորովին սփրթնում է, բաց երբէք լաց չի լինում. նստում է անկիւնում ու մտածմունքի մէջ ընկնում: Սկսում ես հետը խօսել, պատասխան չի տալիս, տրտմում է ու մտքի յետեւից ընկնում որպէս հասակն առած տղամարդ:

— Գուցէ նա թոյլ է կազմուած բով կամ հիւանդոտ է, — շշնջում է Ֆլաւիան զգածուած:

— Ո՛չ, այլ նա շատ գիւրազգած է գէպի ամեն բան, նոյն իսկ գուցէ չափից էլ շատ: Ես պէտք է արմատախիլ անեմ նրա միջից այդ չափազանցութեան աստիճանի հասած գիւրազգացութիւնը, ապա թէ ոչ նա դժբաղդ կրլինի վերջը: Եթէ նա սովորութիւն անէ չափից դուրս շատ սիրել, չափից դուրս շատ բաղձալ, իւր սիրած կամ փափազած բանի բացակայութեան համար չափից աւելի տանջուել, այն ժամանակ... ան, խեղճ իմ գաւաճ...:

Տիրեց անհանգստացնող լուրթիւն: Խօսակցութիւնը կրքի աստիճանին հասնելով՝ կորցրեց իւր բոլոր գրաւչութիւնն ու հրապուրանքը: Չեզարէն ուզեց փորձել դարձեալ երեխայի մասին խօսել, բաց այդ նրան անյարմար երևաց, որովհետեւ ամեն անգամ երբ միտն էր ընկնում Պաօլօն, նոյն ըրպէին մտաբերում էր նաև նրա մօրը—իւր խաբուած ջահէլ կնոջը: Այն չարզանքի զգացմունքը՝ որ Չեզարէն ունէր գէպի իւր կինը, որին այլևս չէր սիրում, և այն սէրը՝ որ զգում էր գէպի այն էակը, որի հետ այժմ կապուած էր, թոյլ չէին տալիս նրան սիրուհու ներկայութեամբ արտասանել կնոջ անուներ: Եւ նա մնաց լուռ:

Յանկարծ Ֆլաւիան տեղից վերկացաւ, մօտեցաւ Չեզարէին և իրան շատուկ կանացի քրնքշութեամբ, որ ամենայաղթ է, ասաց.

— Ինչո՞ւ երեխայիդ ինձ մօտ չես բերում:

Այս առաջին անգամն էր որ Ֆլաւիան այդ տարօրինակ հարցով դիմում էր նրան: Չե-

զարէի դէմքի վրայից դժգոհութեան ստուեր անցաւ, և նա արագութեամբ արտասանեց.

—Անմտութիւն է անշուք...

Բայց Փլաւիան չվհատուեց... Ամեն անգամ, երբ Չեզարէի սէրն ուժգին կերպով էր արտայայտուում, Փլաւիան բոլորովին բարի էր լինում ու սիրալիր և ամեն կերպ աշխատում էր Չեզարէին թելադրել, որ նա երեխային իւր մօտ բերէ: Իզուր էր Չեզարէն լուռ մնում կամ աշխատում խօսակցութիւնը փոխել, Փլաւիան կրկին և կրկին նույն բանի մասին էր խօսում, մնալով անշողագող իւր ցանկութեան մէջ: Այս անգամ Չեզարէն՝ համոզուած որ Փլաւիան խանդի ազդեցութեան ներքոյ չէ հասկանում իւր բմահաճ ցանկութեան կոպտութիւնը և անտես է անում նուրբ զգացմունքները, ասաց.

—Երեխայի վրայ մայրն է հսկում. նա թող չի տալ որ երեխան քեզ մօտ բերեմ. կարծում եմ որ այդ պէտք է ինքդ հասկանայիր:

Այս խօսքերին հետեւեց մի փոթորկալից տե-

սարան. Փլաւիան սկսեց յանդիմանել և՛ իրան՝ իւր յանցաւոր սիրոյ համար, և՛ Չեզարէին: Նա լաց էր լինում, յուսահատվում էր, ձեռները կոտրտում. անիծում էր իւր բեկուած կեանքը և անցն անիծեալ ընկալն, երբ առաջին անգամ հանդիպեց Չեզարէին: Չեզարէն սկսեց մխիթարել նրան. բայց Փլաւիան չէր հանգստանում և շարունակում էր արտայայտել իւր սրտում կիտուած կսկիծն ու դառնութիւնը, որոնց պատճառը իւր կեղծ դրութիւնն էր: Նա մինչև այնտեղ հասաւ, որ սկսեց խօսել թէ ինքը զղջում է իւր արած սխալի համար. ըսկսեց խօսել իւր խղճի խայթի մասին. նա յուսահատվում էր անցն իդէալի խորտակման համար, որ ունէր ընտանեկան կեանքի և խաղաղ գերդաստանի վերաբերմամբ, միով բանիւ անցն ամենի մասին, ինչ-որ ի սէր Չեզարէի զոհել էր ինքը: Չեզարէն ստիպուած էր նրան համբուրել, նրա ականջին մխիթարական խօսքեր շնչալ, որոնք, սակայն, համոզեցուցիչ չէին, որովհետև

աչն, ինչ-որ ասում էր Ֆլաւիան միամտաբար, բոլորն էլ ճշմարիտ էր: Ինչպէս հիւանդ երեխային են անում, աչնպէս էլ Չեզարէն սկսեց նրա մազերը շոյել, ամեն կերպ աշխատել՝ ցաւը մոռացնել տալ և վերջացրեց նրանով, որ խօսք տուաւ մի քանի օրից յետոյ բերել երեխային:

— Դու նրան կըթողնես ինձ հետ մենակ այստեղ, սիրելիդ իմ:

— Կըթողնեմ, իմ անդին, միայն թէ դու լաց չլինիս:

— Կըթողնեմ որ նա մի ժամ, մի ամբողջ ժամ ինձ մօտ մնայ առանձին:

— Այո, սիրելիս:

— Օ, դու իմ սիրեցեալ, իմ թանկագին Չեզարէ, — շէնջաց Ֆլաւիան՝ իրան հանգիստ ու բաղդաւոր զգալով:

— Պաօլօ, — ասաց հայրը երեխային կամաց առաջ հրելով, — ահա սա է աչն տիկինը, որ կամենում է քեզ տեսնել:

Երեխան իւր սեւորակ աչքերը վեր բարձրացրեց և ուրախ ժպտաց Ֆլաւիայի երեսին, որ հրճուանքով թեւերը կրճքին ծալեց ու բացազանչեց կիսաձայն.

— Ո՛րքան գեղեցիկ է. ինչպէս սիրուն է....

Եւ յետոյ դիմելով դէպի հայրը կամաց արտասանեց.

— Չեզարէ, հարցրո՛ւ թէ կըկամենայ ինձ համբուրել:

— Պաօլօ, կըկամենայիր համբուրել տիկնոջը:

— Այո, պատասխանեց տղան:

Եւ նա քնքուշ վայելչութեամբ լի շարժմունքով բռնեց Ֆլաւիայի գեղեցիկ, փալլուն մատանիներով զարդարուած ձեռը և համբուրեց:

— Ապրիս, Պաօլօ. բոլորովին սիրուն ասպետի նման վարուեցիր, — հպարտութեամբ նկատեց հայրը. Ֆլաւիան շարունակ երեխային էր նայում:

— Սիրելիս, կ'ուզեմ մնալ տիկնոջ կողքին, մինչև ես աչն մօտիկ տեղը գտնամ ու դամ:



—Ըուտ կը վերադառնաս, հայրիկ:

—Ըուտ, սիրելիդ իմ:

Երեխայի ներկայութեամբ նրանք չվստահացան իրար ձեռք մեկնել, այլ միայն մի արագ հայեացք ձգեցին միմեանց վրայ: Փլաւիան խոնարհուեց, բռնեց Պաօլոյի ձեռից ու տարաւ նստացրեց ընդունարանի պատշգամբի մօտ, կարծես նրան աւելի լաւ դիտելու համար: Պաօլօն ձգուած կանգնած էր, մուգ-կանաչ թաւշեայ զգեստը հագին և թաւշեայ գլխարկը ձեռին:

—Քո աչքերն իսկեւիկ հայրիկիդ աչքերի նման են,—շնչաց Փլաւիան, բռնելով նրա ձեռն ու քնքշութեամբ շոյելով:

—Այո, բայց բերան մայրիկիս բերանի նման է,—հպարտութեամբ պատասխանեց երեխան:

—Միթէ դու չես ուզում հայրիկիդ նման լինել,—և այդ խօսքի վրայ Փլաւիայի ձայնը թեթեւակի դողաց:

—Հայրիկս գեղեցիկ է, բայց մայրիկս աւելի գեղեցիկ է. նա շատ երկար, երկար ծամեր ունի. իսկ ձեռներն անպէս փոքր են... Դու մայրիկիս չես ճանաչում:

—Զէ:

—Ինչո՞ւ համար չես ճանաչում նրան:

—Յէնց այնպէս,—շնչաց նա գլուխը կախելով, իսկ աչքերն արտասուքով լքցուեցին:

Պաօլօն հետաքրքրութեամբ նայեց նրան ու լռեց: Փլաւիան տեղից վեր կացաւ և սեղանի վրայից քաղցրեղէն վերցնելով տուաւ նրան: Երեխան քաղաքավարութեամբ հրաժարուեց, բայց շարունակեց նրանց վրայ մտիկ տալ, որպէս նայում է բարեկիրթ երեխան՝ համարձակուելով վեր առնել մի բան, որ նա շատ կըցանկանար ունենալ:

—Ինչի՞ չես վերցնում:

—Զնորհակալ եմ, ես տկար եմ:

—Եթէ քեզ դիւր են գալիս դրանք, վեր

առ, Պաօլօ...: Ուսումնարանումն են քեզ աչդ-
պէս սովորեցրել:

—Ո՛չ, իմ մայրիկն է սովորեցրել ինձ աչդ:
Ես ուսումնարան չեմ գնում:

—Հապա քեզ ո՞վ է դաս տալիս:

—Մայրիկս: Նա շատ տխուր կըլինէր, եթէ
առաւօտուանից մինչի ժամը երեքը միայնակ
մնար. ահա աչդ պատճառով նա ինձ հետ պա-
րապում է մինչև ժամը տասներկուսը:

—Լաւ. իսկ տասներկուսին:

—Տասներկուսին ճաշում ենք ես ու մայրիկս:

—Մենակ:

—Հայրիկս երբէք մեզ հետ չի ճաշում: Նա
շատ զբաղուած է. նա շատ գործ ունի, չափից
դուրս շատ գործ:

Տիրեց կարճատև լուռութիւն:

—Վեր առ քաղցրեղէնը, Պաօլօ:

—Այդքանը շատ է, —ասաց Պաօլօն, դիմե-
լով մերժման վերջին չարգելի պատճառին:

—Մի մասն ընկերներիցդ մէկն ու մէկին
կըտաս:

—Ես ընկերներ չունիմ:

—Հապա դու ո՞ւմ հետ ես խաղում:

—Մայրիկիս հետ, երբ նա ցանկանում է:

—Ուրեմն նա միշտ չէ ցանկանում:

—Ո՛չ:

—Ինչո՞ւ...

Երեխան նայեց նրա վրայ ու մնաց լուռ...
Մէկ ակնթարթում փոխուեց Փլաւիայի երեսը՝
արտայայտելով խորին տխրութիւն: Բայց երե-
խան ոչինչ չգիտէր, նա անկարող էր հասկա-
նալ աչդ հարցը:

—Ուրեմն դու շատ էլ չես գուարճանում, —
վերջապէս նորից խօսեց Փլաւիան, խորը յոգւոց
հանելով, կարծես թէ ուզենալով ազատուել մի
ճնշող ծանրութիւնից:

—Ո՛չ, ուրախ եմ անց կացնում ժամանակս:
Մայրիկս կար է անում, դաշնամուր է ածում,
իսկ ես գրքերի միջի պատկերներին եմ նայում:

խաղում եմ խորանարդիկներով, որոնցից տնակներ եմ շինում, կամ թէ չէ՝ նաչում եմ փողոցով անցուղարձ անողներին:

—Եւ միշտ մենակ էք լինում:

—Այո: Հայրիկս մեզ հետ կըլինէր, բայց այն է որ նա շատ գործ ունի, չափից դուրս շատ:

—Քեզ ո՞վ է ասել թէ նա շատ գործ ունի:

—Մայրիկս:

—Հա:

—Երբ ես տխուր եմ լինում, մայրիկս ինձ համար՝ փոքրիկ պատմութիւններ էլ է պատմում: Միայն նրա արած պատմութիւններն այնպէս տխուր են, որ լսելով այդ պատմութիւնները, քիչ է մնում լացս գալ: Դու չգիտես այնպիսի պատմութիւններ, որոնցից մարդու ծիծաղը գար:

—Ո՛չ, սիրելիս: Այդ պատմութիւնները մայրիկդ երեկոներն է պատմում:

—Այո, երեկոները: Ես շատ եմ ուզում թատրոն գնալ. հայրիկս մի անգամ ինձ ու մայրի-

կիս թատրոն տարաւ: Բայց այժմ նա չի կարող մեզ հետ գալ. մենք վաղ ենք պառկում քնելու: Հայրիկս տուն է գալիս շատ ուշ, գիշերով, բոլորովին գիշերով, և կամաց, շատ կամաց գնում է կողքի սենեակը, որպէսզի մեզ չգարթացնի: Բայց մայրիկս երբէք քնած չի լինում, ամեն բան լսում է: Երբեմն ես էլ եմ լինում արթուն: Այդ ժամանակ մայրիկս հագիւ լսելի ձայնով ասում է. «ահա եկաւ հայրիկդ»: Իսկ երբ հայրիկս մտնում է մեր սենեակը որ ինձ համբուրի, մենք այնպէս ենք ձեւանում թէ քնած ենք:

—Ուրեմն հայրիկդ քեզ համբուրո՞ւմ է:

—Այո, և դուրս է գնում ոտերի թաթերի վրայ, ինչպէս որ եկել էր:

—Իսկ մայրիկիդ չի համբուրում:

—Ո՛չ, — ասաց երեխան ու սկսեց մտածել:

—Ասել է դու և մայրիկդ մի սենեակում էք քնում:

—Այո, առաջ ես այնտեղ չէի քնում. բայց

հաչրիկս մի ամսով գնաց ճանապարհորդելու, իսկ մաչրիկս վախենում էր մենակ լինել, այդ պատճառով իմ անկողնակալս էլ իւր մօտ տարաւ։ Ահա հէնց այդ ժամանակից սկսած ես մնացի նրա մօտ։

Ֆլաւիան յենուեց բազմոցին. նրա գլուխը պտոցտ եկաւ։ Երեխան իւր բարի ու զարմացած աչերով նայում էր նրան։ Ֆլաւիան ոչ խօսում էր և ոչ շարժվում։ Նա կարծես փէտացել էր, և Պաօլօն արդէն սկսել էր երկիւղ զգալ այդ գեղեցիկ տիկնոջից, որի վրայ մահուան դժգունութիւն էր եկել։ Երեխան մեքենայաբար ձեռքերով ճմրթում էր իւր գլխարկը. նա շատ էր ցանկանում որ հաջոր շուտ վերադառնար ու իրան տանէր տուն։

Մէկ էլ յանկարծ սարսուաց Ֆլաւիան, գլուխը բարձրացրեց. նրա երեսն աչնալիսի տանջանք էր արտայայտում, որ երեխան ակամայ ձեռները մեկնեց նրան, ինչպէս իւր մօրը և ասաց.

— Ի՞նչ եղաւ քեզ։

Խուլ հեկեկանք դուրս թռաւ Ֆլաւիայի կրծքից, երբ նա համբուրեց գեղեցիկ, սիրուն երեխային, որ միամիտ կերպով զարմացած էր այդ տարօրինակ տեսարանից։ Նրա արտասուքներն առատութեամբ հոսում էին Պաօլօյի աչտերի ու պարանոցի վրայ։

— Մի լար, տիկին, մի լար. բոլորը կ'անցնի։

— Լաւ, էլ լաց չեմ լինիլ. համբուրիր ինձ այնպէս՝ ինչպէս մաչրիկիդ։

Պաօլօն իւր մանրիկ թւերը փաթաթեց նրա վզին ու համբուրեց։

— Մնաս բարով, սիրելիս. աչտեղ դու մի ըրպէս սպասիր. աչս ըրպէիս կը վերադառնայ հաչրիկդ և քեզ կը տանի ձեր տուն։ Իսկ ես պիտի գնամ....

— Ասեմ մաչրիկիս որ ես աչտեղ էի։

— Ինչի համար։

— Որովհետեւ հաչրիկս ինձ ասաց որ չասեմ։

Փլաւիան մտածման մէջ ընկաւ: Ապա իրանից յետ մղելով վերջին կասկածը, ասաց.

—Ասա, ասա մայրիկդ, որ դու Փլաւիայի մօտ ես եղել:

Եւ մէկ ականթարթում նրա գեղեցիկ ձեռն ընկաւ երեխայի գանգուր մաղբրի վրայ, ասես թէ աչդ կերպով օրհնելիս լինէր Պատուիչին:

—

Այդ դէպքից յետոյ Փլաւիան և Չեղարէն՝ էլ երբէք չպատահեցին իրար:

Մ ա տ ի լ զ ա Ս եր ա օ



Վ Ր Է Ժ

Վէպիկ:

—

Խախաճաշը բոլորովին սուսուփուս անցաւ: Երեւում էր որ Դիւպրէն դժուարութեամբ էր իրան զսպում. իսկ նրա կինը՝ անհանգստութեամբ ամենայն վաչրկեան նայում էր նրան, իզուր աշխատելով գուշակել նրա մտքերը:

Սպասաւորը սրճի պարագաները հաւաքելով դուրս գնաց: Դիւպրէն տեղից վեր կացաւ ու զիմեց կնոջը:

—Չգնանք արդեօք ձեր սենեակը. ձեզ հետ խօսելիք ունիմ:

—Ուրախութեամբ, սիրելիդ իմ: Բայց ի՞նչ է

պատահել. դո՛ւնդ բոլորովին թռած է. չլինի՞
թէ հիւանդ էք:

—Հէնց իմ աչդ հոգեկան տանջանքիս մա-
սին է որ ուզում եմ ձեզ հետ խօսել:

Դիւարէն քանի մի քաջ արաւ դէպի դուռը.
ապա անհամբերութեամբ յետ դարձաւ դէպի
կինը: Բայց կինը, որ աշկարաց յուզուած էր,
դանդաղում էր և այնպէս էր ձեւացնում, որ-
պէս թէ բան է ժողովում սեղանի վրայից:
Դիւարէն անհամբեր շարժում արաւ, ասելով՝

—Վերջացրէք:

Կինը սրտապնդուելով հետեւեց ամուսնուն.
Երբ մտան սենեակ, Դիւարէն դուռն ամուր
փակեց և ձեռքերը կրծքին խաչելով, սպառնա-
լից դէմքով կանգ առաւ կնոջ առջև:

—Դժգոյքիւն մեռաւ,—ասաց նա:

—Ա՛հ,—արտասանեց կինը ցնցուելով:

—Ե՛ս սպանեցի նրան:

—Դ՞ուք:

—Այո՛, ես:

Եւ նա զրպանից մի նամակ հանեց ու մօ-
տեցրեց կնոջ աչքերին:

—Ճանաչո՞ւմ էք այս:

—Այո՛,—պատասխանեց կինը. ապա մեծ զը-
ժուարութեամբ տեղից վեր կենալով շարունա-
կեց:

—Զարկ, դուք միայն կէսն էք կատարել:
Արդարութիւնը կատարեալ անելու համար պա-
տուհասեցէք նաև միւս մեղաւորին:

—Խնդրեմ, խնդրեմ, առանց մելօդամայի.
ձեր պերճախօսութիւնը զնահատելու ես ամե-
նեին տրամադիր չեմ: Խնդրեմ նստէք և լսէք՝
ինչ-որ ասելու եմ:

Դիւարէն ձեռքով շփեց ճակատը և մի քա-
նի ըոպէ լուռ մնաց:

—Այսպէս ուրեմն,—վերջապէս սկսեց նա,—
ես ձեզ հաւատում էի, բայց դուք ինձ խա-
բեցիք. ես քնքուշ էի դէպի ձեզ, բայց դուք
ճաղրեցիք իմ քնքշութիւնը. դուք արատաւո-
րեցիք անունս, թունաւորեցիք կեանքս...: Եւ

այս բոլորը դուք արել էք առանց խղճի խաչ-
թի, արել էք առանց ատելութեան... առանց
սիրելու...: Դուք այդ արիք, որովհետև առաքի-
նութիւնը միշտ գրաւիչ չէ, որովհետև ողջա-
խոհութիւնը միակերպ է, որովհետև... միքիչ
էլ ծիծաղել է հարկաւոր...:

Կինը պաղատական շարժում արաւ:

—Այո, այո, գիտեմ,— շարունակեց Դիւպրէն,
հետզհետէ աւելի ու աւելի տաքանալով և աս-
տիճանաբար ձայնը բարձրացնելով,—գիտեմ,
թէ ինչ պիտի ասէք ձեզ արդարացնելու հա-
մար: Ձեր արարմունքների համար ի հարկէ
պատասխանատուն դուք չէք...: Ձեր ամուսի-
նը պարտաւոր է ներել ձեր անկումը, խոնար-
հուել ձեր թուլութիւնների առաջ: Այնպէս
չէ: Ամեն տեղ և ամեն բանում մեղաւորը ձեր
հիւանդոտ նեադերն են և ձեր անհաստատ
սիրտը: Հարկաւ...: Սակայն գիտէք ինչ, Սիւ-
զան. ես չեմ ընդունում այդպիսի արդարա-
ցումներ: Ես ատում եմ ձեզ և պիտի վրէժս

առնեմ ձեզանից: Միքիչ առաջ դուք ասացիք՝
«ինձ ևս սպանեցէք, ինչպէս սպանեցիք
նրան»: Ո՛չ, ես ձեզ չեմ սպանիլ. դրանից դուք
չափից դուրս գոհ կըլինէիք: Բայց ես կ'աշ-
խատեմ մի անյալիսի պատիժ գտնել, որ հաւ-
ասարուի ձեր դաւաճանութեան. և մահից էլ
աւելի սարսափելի բան եմ պատրաստել ձեզ
համար:

—Ի՜նչ, սարսափով հարցրեց կինը:

—Այդ արդէն իմ գիտեանալիքն է. դուք այդ
չետոյ կ'իմանաք,—պատասխանեց Դիւպրէն և
դուրս գնալով սառն հեզնութեամբ աւելացրեց.

—Ուզում եմ մի «իւրաքանչիւր» պատրաստել ձեզ հա-
մար:

Ճաշի ժամանակ Դիւպրէն բոլորովին ան-
վրդով էր. յուզմունքի մի աննշան հետք ան-
գամ չէր մնացած նրա դէմքի վրայ: Ամբողջ
ճաշի ընթացքում նա մի հատ խօսք անգամ

չարտասանեց, և միայն սեղանից վեր կենալիս դիմեց կնոջը.

—Առաջուկս պէս դուք դարձեալ բոլորովին ազատ կլլինիք ձեր անելիքների վերաբերմամբ. ես միայն ձեզանից պահանջում եմ, որ դուք ճաշն ու նախաճաշն ամեն օր անպատճառ ինձ հետ ուտէք. իսկ մնացած ժամանակը ձեր կամքին եմ թողնում, արէք, ինչ-որ կամենաք:

Սիւզանը լուռ լսում էր նրան:

—Ամեն բան այնպէս կլլինի, ինչպէս որ դուք էք փափագում:

Եւ նա գալիս էր ճաշի և լուռ նստում ամուսնու դիմացը: Բայց տխուր և թույլ լինելով չէր կարողանում բան ուտել. ամենաթեթեւ շոտկից իսկ ցնցվում էր՝ ահուգողով սպասելով ամուսնու խոստացած պատժին, և զարմանում էր, որ չէր գալիս այդ խոստացած պատժը: Եւ նրա երեւակայութիւնը շարունակ գործում էր, աշխատելով գուշակել այն սարսափելի պատիժը, որ ինքն ստանալու էր: Նա մտաբե-

րում էր զանազան վէպեր, որոնց մէջ խաբուած ամուսինները ամենանուրբ անգթութեամբ վրէժ են առնում իրանց կանանցից ու նրանց սիրականներից: Բայց այդ բոլոր դէպքերումն էլ արիւն էր թափվում, մինչդեռ՝ ինքը զիտէր որ իւր կեանքին վտանգ չէ սպառնում: Ապա ուրեմն իրան ինչ էր սպառնում:

Եւ Սիւզանն սկսեց քիչ-քիչ հաւատացնել ինքն իրան, որ վախենալու ամենեւին պատճառ չկայ, քանի-որ, ըստ երևութին, ամուսինը ևս դժուարանում էր: Նա կնոջը միայն վախեցնել էր ուզում. բայց հիմա որ արդէն հասած է սպառնալիքն իրագործելու ժամանակը, ինքը ևս չզիտէ թէ ինչ հնարէ:

Վերջապէս անհամբերութիւնն սկսեց տիրել Սիւզանին. և նա մտածեց տանջել իւր ամուսնուն, որ՝ այդ բանում Սիւզանը համոզուած էր, ամեն տեսակ տանջանքներ է հնարում թէպէտ, բայց նրանցից ոչ մէկն էլ արժան չէ համարում: Այդ պատճառով և Սիւ-

զանն սկսեց՝ նրբօրէն ու չարախնդացութեամբ բաց մեղմ եղանակով կծու-կծու խօսքեր արտասանելով վիրաւորել ամուսնուն։

Սիւզանը ևս, ինչպէս և շատ կանայք, գիտէր ամենահասարակ նախադասութիւնն իսկ այնպէս շրջել, որ վիրաւորեցուցիչ դառնար։ Չատ անգամ նա ամուսնուն ասում էր՝ «սիրելիս», և ամեն անգամ էլ այդ բառն ապտակի ազդեցութիւն պիտի անէր Դիւպրէի վրայ։ Եւ միշտ էլ այդ ձևով էր վարվում։

Սիւզանն ամեն հնար գործ դրեց որ մի կերպ կարողանայ համբերութիւնից հանել ամուսնուն... Այն, եթէ միայն սրտնեղութեան, անհամբերութեան մի հատիկ բառ դուրս գար այս մարդու բերանից, կամ միմիայն դժգոհութեան ստուերը, ինչ ստուերը երևէր սրա աչքերում... Բայց, որպիսի չաղթանակ կլլինէր։

Սակայն Սիւզանն իզուր էր վատնում իւր աշխատանքն ու ժամանակը։ Դիւպրէն ասես թէ ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր նկատում։ Վի-

րաւորանքները կարկտի պէս թափվում էին Դիւպրէի գլխին, բաց նա ամենաչնչին ուշադրութիւն անգամ չէր դարձնում այդ բանին. ալ միայն երբեմն մի անտարբեր հայեացք էր ձգում Սիւզանի վրայ. մի հայեացք, որի ազդեցութեան տակ նա հարկադրուած էր լինում անմիջապէս լուել։

Սիւզանն այդ անշահ զբաղմունքից վերջիվերջոյ չոգնեց։ Ամուսնու անտարբերութիւնն սկսել էր նրա վրայ ևս ազդել։ Այս ի՞նչ տեսակ մարդ է սա, որ կարողանում է իրան այսպէս գտակ։

Դիւպրէն հետզհետէ բարձրանում էր իւր կնոջ աչքում։ Եւ Սիւզանը մտաբերեց իւր անցեալը, իւր առաջին հանդիպումը Դիւպրէի հետ, որին սրտանց նուիրուել էր հէնց առաջին իսկ րոպէից. նա չի՜եց նաև իրանց ամուսնութիւնը, իրանց փոխադարձ սէրը... երջան-

կուլթիւնը.... Ահ, ինչպէս հեռու էր այդ բոլորն իրանից:

Միւզանը մտքով թուաւ դէպի իւր անցեալը. նրա չիշողութեան մէջ չարութիւն առան շատ երջանիկ րոպէներ. զարմանալի պարզութեամբ նա չիշեց մերթ աչտ, մերթ աչն անցքը: Եւ հետզհետէ, միմեանց յաջորդելով, նրա աչքի առաջից սկսեցին անցնել բազմաթիւ այնպիսի դէպքեր, որոնց նա, կարծում էր, ընդմիշտ չնջել էր իւր չիշողութիւնից: Ո՛րքան գեղեցիկ էր Դիւպրէն, ինչպէս հրապուրիչ՝ երբ ուզում էր իրան հաճոյանալ. որպէս ուշադիր... և ինչպէս սիրուն էր...: Ո՛հ, և ինչպէս սիրում էր իրան: Այսպէս մի երեկոյ էլ, — պատկերացաւ նրա առաջ այնպէս պարզ, որ ասես թէ երէկ եղած լինէր այդ, — ինքն ու Դիւպրէն լուսամտի առաջ կանգնած նայում էին մալք-մտնող արեգի վերջին ճառագայթներին և հանդարտիկ զրոյց էին անում իրանց սիրոյ, իրանց ապագայի մասին: Եւ նա պէտք է որ չիշէր այն, ինչ-որ

Դիւպրէն նրան ասաց այդ հրաշալի վաչրկենին. սակայն այդ բոլոր մոռացութեան տուած խօսքերը՝ այժմս անդրադառնալով նրա կոտրած սրտում, միայն կսկիծ էին պատճառում նրան. և նա զգում էր որ ուժասպառ է լինում:

Միւզանը մտաբերեց իրանց կենակցութեան առաջին տարիները... այն տարիները, որոնք լի էին խաղաղ ու անվրդով երջանկութեամբ.... Ամուսնութեան վերաբերմամբ ինքը չէր հիասթափուել, որովհետեւ իւր բոլոր ցնորքները, իւր բոլոր յոյսերն իրականացած տեսաւ: Ամուսնութեան վեհ գաղափարը, որ կազմուել էր իւր կուսական երևակացութեան մէջ, ամբողջապէս համապատասխանում էր իրականութեան և իւր նոր կեանքը միայն ժպտում էր իրան. իւր բոլոր զգացմունքներն արձագանք էին գտնում, իւր մտքերը հասկացվում էին, բաղձանքները կատարվում: Ինքը միայն պէտք է սիրէր ու վաչելէր այդ կեանքը: Եւ այդ երջանկութիւնը կարող էր չարատեւ լինել, եթէ

ինքը իւր իսկ ձեռքով չսորտակէր այդ բոլորը։
 Բայց իսկն ասած՝ ինքն այնքան էլ չանցաւոր
 չէ։ Ի՛նչ բանում կարող են իրան մեղադրել։
 —Թեթեւամտութեամբ կամ անգղուշութեամբ
 արտասանած քանի մի խօսքի համար... Բայց
 նա՛ ռով որ գրել էր այդ չարաբաստիկ նամակը,
 ի հարկէ բոլորովին ուրիշ կերպ էր բացատրու-
 թիւն տուել՝ երկրպագութեան սովոր մի կնոջ
 հաճոյախօսութեանը։ Բայց միթէ ինքն է պա-
 տասխանատու մի խիզախ և անմիտ պատանու
 համարձակութեան համար... Սակայն ի՛նչ ու-
 գում է լինի, բայց ինքն անարատ և հաւա-
 տարիմ ամուսին է մնացել և իւր սիրադեղուն
 սիրտը միմիայն իւր ամուսնու համար է բաբախել։
 Հապա էլ ի՛նչ իրաւունքով նա այդպէս մեծ-
 սրտանի է դարձել կնոջ վրայ. էլ ինչո՞ւ է չան-
 ցանք պատժելու և վրէժխնդրութեան մասին
 խօսում։ Վերջապէս ինքը տանջուել է նրա
 պատճառով, ապա ուրեմն և ինքը կարող կը-
 լինի արդարանալ։

Բայց ո՛չ, ո՛չ. չի կարելի այսպէս վրդովուել
 և այս կերպ դատել։ Արդեօք զոր ամուսինն
 անմեղ կը համարէր իւր կնոջը, եթէ նա կար-
 դար այն՝ ինչ-որ կարդացել է Դիւպրէն։

Եւ այսպէս Սիւզանն ընդունում էր պատի-
 ժը։ Քանի որ ինքը հաճոյասէր է ե-
 դել և ջանացել է ուրիշներին դիւր
 գալ, ուրեմն արժանի է պատժի։ Սակայն
 դարձեալ ինքը իւր վարմունքով կարող է կակ-
 դացնել իւր դատաւորի սիրտը. համբերութեամբ,
 քնքշութեամբ, խոնարհութեամբ և զղջումով
 ինքը ներման կ'արժանանայ, Միայն չպէտք է
 ժամանակ կորցնել։ Եւ Սիւզանը նոյն ժամից
 իսկ գործի ձեռնարկեց։

Չնայելով իւր խորին տխրութեանը, Սիւզանն
 այնուամենայնիւ անկարող եղաւ չժպտալ, երբ
 մտածեց, թէ որքան պիտի զարմանայ ամու-
 սինը։ Դիւպրէն անպատրաստ լինելով այդ նոր
 տեսակ կռուի համար, ի հարկէ պիտի չաղ-
 թուէր. Սիւզանը բոլորովին համոզուած էր այդ

բանում: Ամուսնու գէմքից ինքը կը գուշակի նրա գաղտնի մտադրութիւնները, նրա զգացմունքները, և խղճահարութեան միմիայն մի վայրկեան, ոչ, էլ պակաս—հարիւրերորդական վայրկեան... և ինքը փրկուած կըլինի:

Ճաշելու ժամը հասաւ: Պէտք էր գլուխ բերել այդ դժուարին մտադրութիւնը: Սիւզանը ժողովեց իւր բոլոր արիութիւնը. նրան տիրապետող յուզմունքը մի անսովոր գեղեցկութիւն էր տուել նրա գէմքին. նրա աչքերը՝ որ նա հազիւ համարձակվում էր վեր բարձրացնել, գլխութիւն էին աղբրսում: Սակայն գուր էր այդ գեղանի աչքերի պայծառ ցոլքը: Դիւպրէն նրանց վրայ ուշադրութիւն անգամ չգարձրեց, այլ միայն սկսեց ուտել սուսուփուս, որպէս թէ մենակ ինքն էր սեղան հստած: Երբ ճաշը վերջացաւ, Դիւպրէն՝ ըստ իւր վաղեմի սովորութեան մի գլանակ կպցրեց ու դուրս գնաց:

Որեւէ բան փոխելու նա կարիք չէր զգում: Սակայն Սիւզանը չընկճուեց ամուսնու այդ վարմունքից, այլ ընդհակառակը նա կրկնապատկեց իւր ջանքերը: Նա ձեռք առաւ իւր զիտցած բոլոր հնարները—հազար ու մի մանրմունք բաներ, որոնց շատ քիչ տղամարդ կարող է գէմ կենալ: Բայց կարծես այդ մարդը պղնձից լինէր ձուլուած. ոչ մի շարժման նշան չերեաց նրա վրայ, և կինն իզուր էր պատասխան որոնում ամուսնու աչքերում կամ շրթթուների վրայ: Սիւզանն ուրիշ ոչինչ չհասցաւ՝ բացի քանի մի անհրաժեշտ խօսքերից, ուրիշ ոչինչ չտեսաւ՝ բացի միայն սառն, ուշադիր հայեացքից, որից նրա արիւնը սառնում էր երակներում:

Եւ այդպէս ամիսներ էին անցնում...

Այդ առաւօտ Սիւզանը Դիւպրէի հաւանած շորն էր հագել, գլուխը սանդղել նրա սիրած

ձևով, վզից էլ կախել էր ոսկէ փոքրիկ խաչը, որին՝ փաղաքշանքով լի օրերին, ակնածութեան պատրուակով հարիւրաւոր համբոյր էր դրոշմել Դիւպրէն, հետն էլ պաշելով նաեւ այն պարանոցը, որից քաշ էր արած այդ խաչը:

Երբ նախաճաշի ժամը եղաւ, Սիւզանը՝ սրտի ուժգին բաբախումով վար իջաւ ինչպէս մի կին, որի համար ամուսնուն դիւր գալուց զատ էլ ուրիշ որեւէ հոգս չկայ: Սեղանի վրայ նա այժմս աւելի պատրաստակամ ու բարեհոյս էր, քան թէ եղած էր երբեւիցէ. նրա արտասանած ամեն մի խօսքը մի առանձին անուշութիւն ունէր, իսկ հայեացքը լի էր մի տեսակ արբեցուցիչ քնքշութեամբ:

Բայց և այնպէս Դիւպրէն մնաց անդրդուելի:

Այն ժամանակ Սիւզանը տեղից վեր կացաւ, շտապով մօտեցաւ ամուսնուն և թեքուեց դէպի նրան, այնպէս որ իւր մազերը հպվում էին ամուսնու մազերին: Սակայն Դիւպրէն տեղից

չջարժուեց: Սիւզանն էլ աւելի թեքուեց դէպի ամուսինը, այնպէս որ վերջինս զգում էր նրա շնչառութիւնը: Այդ ժամանակ Դիւպրէն մի քիչ ետ շրջուեց և այս խօսքերն ասաց.

— Թեթեւ վարքի տէր կնոջ դերը դուք շատ լաւ էք կատարում:

Սիւզանը դուրս վազեց աչքերն արտասուքով լի...:

— Մանկութեանս ընկերուհի Լիւիզը մի-երկու օրով Փարիզ է եկել, վաղը գնալու է. արդեօք թոյլ կրտօք որ ճաշի հրաւիրեմ մեզ մօտ:

— Այդ անկարելի է, — պատասխանեց Դիւպրէն:

— Անկարելի՛. արդեօք ինչո՞ւ համար:

— Որովհետեւ այս սեղանի վրայ, մեր մէջտեղը մի երրորդ անձնաւորութիւն կայ, որ ոչ ոքի ընդունելու չի թոյլատրում մեզ:

Կնոջ զարմացական հայեացքին Դիւպրէն պատասխանեց.

—Այո, հանգուցեալն է դա, այսինքն՝ մեր սէրը, որին դուք սպանեցիք...: Բայց, — աւելացրեց նա արհամարհական ծաղրով, — դուք այդ Հէք հասկանալ:

Ո՛հ, ամբողջ կեանքի անտանելի տանջանք: Ամեն Աստծու օր նստել այնտեղ, ուտել, խմել, շնչել այդ սարսափելի մարդու մօտ: Ամեն Աստծու օր, օրը երկու անգամ մի-մի ամբողջ ժամ շարունակ տանել այդ անգութ դատաւորի ներկայութիւնը...:

Այս տեսակ կեանքը մահ է. ոչ՝ մահից էլ վատթար — դժոխք է...:

...Սիւզանը միայն նախաճաշին էր դուրս գալիս, իսկ այնուհետեւ մինչեւ ճաշ իւր սենեակումն էր լինում: Նա լսում էր թէ ինչպէս ժամը ժամի ետեւից զարկում էր ժամացույցը, որի իւ-

րաքանչիւր զարկին ցնցվում էր նա: Նրան այնպէս էր թվում, թէ ժամացույցի մրճիկը իւր սրտին է հարուած տալիս և Սիւզանն ահուգողով սպասում էր այն ըուպէին, երբ ինքը նորից պիտի սեղանակից լինի այն մարդուն, որի նոյն իսկ տեսքն անգամ անտանելի էր իրան:

Գիշերները նա անքուն էր անցկացնում. իսկ երբեմնապէս էլ նրա սիրտն սկսում էր այնպէս ուժգին տրոփել, որ ստիպուած էր լինում լուսամուտը բանալ թարմ օդ շնչելու:

Այդ չէր կարող երկար շարունակուել: Նա չէր կարող վերջապէս առանց ընդդիմութեան թոյլ տալ, որ իրան անդանակ մօրթեն: Իսկելիսկ մարդասպանութիւն է այն: Իրաւ է այդ սպանութեան հարուածները չէին լսվում, նրա ձեռներից արիւն չէր կաթում, բայց և այնպէս նա սպանում էր նրան: Ե՛լ վճռուած է. ինքը պէտք է ճաշն ու նախաճաշն ուտի մեն-մենակ,

պէտք է ամեն կերպ աշխատի խոստափել այդ մարդուն՝ երես առ երես հանդիպելուց։ Եւ Սիւզանը ընդդիմադրելու էր տրամադրում իրան, զգում էր իւր եռանդի աւելանալը, արիւնը գլխին էր խփում։ Տէ՛ր, ինքը նրա հախիւքը կը գաչ։ Երբ ամուսինը հրամայէ գնալ ներքեւ ճաշելու, ինքը կ'ասէ՝ Ո՛չ... Ա՛յ, կըտեսնի...

Ահա թէ ինչ էր կրկնում ինքն իրան Սիւզանը. սակայն հէնց որ ճաշի ժամն էր լինում, մի անշատ ոյժ՝ աւելի զօրեղ քան իւր սեպհական կամքը, հարկադրում էր նրան դուրս գալ իւր սենեակից։ Սիւզանն զգում էր իւր ամուսնու ահռելի հայեացքը, որ ստիպում էր նրան գնալ, և նա էլ գնում էր. գնում էր՝ ինչպէս որ կ'երթար քնէածուրթեան ենթարկուածը, մտնում սեղանատուն և բարոյապէս ընկճուած վաչր ընկնում իւր աթոռի վրայ. աթոռ, որ թփում էր թէ իւր տանջանքի գործիքն է։ Եւ հէնց այդտեղ, այդ աթոռի վրայ նստած, սփրթնած ու խելակորոյս, Սիւզանն սպասում էր

մահուան, որ ամուսինը սակաւ առ սակաւ մօտեցնում էր նրան։

Մի առաւօտ էլ քնից արթնանալով, Սիւզանն իրան աչնպէս վատ զգաց, որ կարծեց թէ մօտեցել է իւր օրհասը։ Սակայն ինչպէս որ էր մի կերպ կարողացաւ հագնուել, թէև ճնկները ծալվում էին։ Բայց նա հասկանում էր որ սենեակից դուրս գալու ոյժ չի ունենալ. և երբ նախաճաշի ժամն եղաւ, նա զանկը հնչեցրեց և խնդրեց որ ամուսնուն կանչեն։

Դիւպրէն իսկոյն եկաւ։

— Եթէ ես ձեզ խնդրեցի գալ, — սկսեց Սիւզանը, — պատճառն այն է, որ ես ամենախղճալի դրութեան մէջ եմ. վաչր ընկնելու ահից ես ման գալ չեմ կարող... գլուխս պտրտվում է... շունչս կտրվում... զգում եմ որ մեռնում եմ... Այսօր նոյնպէս կամենում էի պարտքս կատարել — ձեզ հետ միասին լինել, ինչպէս որ դուք

էք պահանջում... Սակայն ինքներդ էլ էք տեսնում, որ ես ոչ ժ չունիմ... աչդպէս անել ես անկարող եմ... Ի՛լ այս աշխարհի մարդ չեմ ես... Ուղիղն եմ ասում՝ աչքս անկարող եմ....

— Զեմ կարո՞ղ... հաւատացնում եմ ձեզ՝ չեմ կարո՞ղ..., — մի գլուխ կրկնում էր նա նուազած ձայնով։

Յետոյ սկսեց լալ։

Դիւպրէն, որ մինչի վերջը լսել էր նրան առանց ընդմիջելու՝

— Ուղարկեմ բժիշկ կանչել տամ, ասաց ու քաջերն ուղղեց դէպի դուռը։

Այն ժամանակ՝ ահաբեկուած, ձեռները պարզելով դէպի ամուսինը, նա թախանձեց.

— Ո՛հ, Ջարլ, աղաչում եմ, մի թողնէք ինձ այսպէս։ Եւ միթէ դուք սիրտ կ'անէք թողնել ինձ այս դրութեան մէջ մեն-մենակ սենեակումս։ Ջարլ, երէկ ես վախենում էի ձեզանից, իսկ այսօր, — ինչպէս ուզում էք բացատրեցէք, — ներկայութիւնդ անհրաժեշտ է ինձ համար...։

Սիւզանը մի րոպէ կանգ առաւ, վախեցած, ամբողջովին դողալով նայեց ամուսնուն. և ապա շարունակեց.

— Ներկայութիւնդ ինձ նրա համար հարկաւոր է, որ ես ներումն խնդրեմ ձեզանից... Այո, Ջարլ, դուք պէտք է ներէք ինձ....

Դիւպրէն բացասական կերպով գլուխը շարժեց։

— Երբէք, — ասաց նա խստօրէն։

— Ներեցէք, որ կարողանամ հանգիստ հոգւով հեռանալ այս աշխարհից, որպէսզի ձեր ներումը երկնքի գուլթը շարժէ։ Դուք չէք կարող ինձ համար հանդերձեալ կեանքի մէջ թշուառութիւն ցանկալ...։

Այն ժամանակ Դիւպրէն յօնքերը կիտելով, ատելութեան և ռիսակալութեան զգացմունքով լցուած, արտասանեց.

— Ես չեմ ներում։

Եւ՛ ինքն ևս չիմանալով թէ ինչու, մօտեցաւ կնոջը, որ բռնեց նրա ձեռը։

—Բայց ես խնդրում եմ, ես աղաչում եմ ձեզ: Այսքան տարի է ես ձեզ համար եղած եմ ամեն ինչ. ձեր սիրտը բաբախել է միմիայն ինձ համար... և միթե այժմս այդ սրտի մի հատիկ զարկը գոնե ինձ չէ պատկանում: Ուրեմն այնպես անգուլթ է այդ ատելութեան զգացմունք ասած բանը, որ ճնշումն է գործում ամեն բանի վրայ. նույն իսկ սիրոյ վրայ...:

—Մեր սիրոյ մասին խօսելն արգելում եմ ձեզ,—ասաց Դիւպրէն և ձեռը դուրս կորզեց կնոջ ձեռից:

—Ես քեզ հաւատացնում եմ՝ դու ինձ աւելի յանցաւոր ես կարծում, քան թէ եմ իսկապէս:

Դիւպրէն միայն ուսերը վեր քաշեց անխօս:

—Այո,—նորից սկսեց Սիւզանը,—այն նամակը դեռ ոչինչ չէ ապացուցանում...: Ես անզգուշ էի, չիմար էի, մեղաւոր էի. զիցուք թէ հարիւր անգամ մեղաւոր էի. բայց... սպասիր, Ջարլ, դեռ լսիր. թող քեզ բացատրեմ: Ես

քեզ հաւատացնում եմ՝ այդ ամենեւին այն չէ, ինչ-որ դու ես երեակաչում...:

Դիւպրէն սարսափելի քրքիջ բարձրացրեց և նորից քաջերն ուղղեց դէպի դուռը:

Այն ժամանակ Սիւզանը ժողովելով իւր վերջին ոյժերը, վեր թռաւ բազկաթոռից, շտապով մօտեցաւ ամուսնուն և ամուր սեղմելով նրա ձեռքը, սրտաճմրիկ ձայնով աղաղակեց.

—Ներիր...: Եթէ դու իմանայիր՝ ինչեր եմ քաշել...: Տես, մագերս սպիտակել են քսանուհինդ տարեկան հասակումս...: Նայիր խեղճ ձեռներիս, նայիր իմ չարչարուած անձիւս, Նիհար չեմ: Կարծես թէ դադաղից եմ դուրս եկել...: Իմ այս գրութիւնը միթէ քո գութը չէ շարժում...: Տես թէ որքան եմ տգեղացել. ես պառաւեցի հէնց այն ժամանակից, երբ ինձ սիրելուց դու դադարեցիր: Ուրեմն կրկին սիրիր ինձ, որպէսզի ես նորից սիրունանամ...:

Այդ տեսարանին վերջ տալ կամենալով, Դիւպրէն մի խիստ շարժում գործեց յետ գնալու

համար։ Դժբաղդ կինը, որ դեռ բաց չէր թողած նրա ձեռը, չոքեց։

— Զմնասուեցիր արդեօք, — հարցրեց ամուսինը։

Բայց կինը չպատասխանեց ամուսնու այդ հարցին, այլ խելագարի նման միայն իրան պեղեցնող մտքին հետևելով՝ շարունակում էր հառաչել։

— Ո՛հ, ներիր. ներիր կամ սպանիր...:

Դիւպրէն կրկին փորձեց խուսափել, բայց Սիւզանն՝ ամուր բռնած լինելով ամուսնուն, յատակի վրա չից սողալով սկսեց նրան հետևել և հետզհետէ նուաղուող ձայնով, սուելի ու աւելի շնչասպառուելով, բարկութիւն և յուսահատութիւն արտայայտող ձայնով կրկնել անդադար։

— Սպանիր ինձ. սպանիր ինձ, ասում եմ։

Վերջապէս Դիւպրէն կարողացաւ՝ առանց նրան ցաւ պատճառելու մի կերպ բաց անել նրա մատները, — որոնցով Սիւզանը ջղաձկու-

թեամբ այնպէս էր սեղմել, որ եղունգներն ամուսնու մարմնի մէջն էին մտել համարեա, — և դուրս փախաւ...:

Սակայն դեռ սանդուղքներին չէր հասել որ մի ճիչ հասաւ Դիւպրէի ականջին՝ այնպէս յարսափելի, այնպէս չարագուշակ ճիչ, որից նրա սիրտը փորն ընկաւ. և նա վերադարձաւ կնոջ մօտ։

Սիւզանը, որ մեծ աշխատանք գործ դնելով հազիւ վեր էր կացել, նորից էլի ընկած էր աթոռի վրայ։ Նա ոչինչ չէր խօսում, չէր նայում, անշարժ էր և գիտակցութիւնը կորցրած։ Զուտ-շուտ կրկնուող շնչառութիւնից ալէկոծուելով վեր-վեր էր բարձրանում նրա կուրծքը, որից երբեմնակի ծանր հառաչանք էր դուրս թուջում...։ Այդ աւերակի առաջ Դիւպրէն ամեն ինչ մոռացաւ։

Նա կնոջ առջև չոքեց, գրկեց նրա իրանը, իւր ճակատը կպցրեց նրա սաստիկ նիհարած

հէք գլխին և առաջուայ նման մեղմիկ ու քնքուշ ձայնով ասաց.

— Սիւզան, գրկիր ինձ, ես քեզ ներում եմ.

Սիւզանի կրծքից մի ուժգին և սրտաշարժ ճիչ դուրս թռաւ, յանկարծակի ամբողջովին ձգուեց և արտասանեց.

— Փառք քեզ Աստուած, փառք քեզ... —
և անշնչացած ընկաւ ամուսնու թևերի վրայ:
Նրա մարմինն էլի մի երկու անգամ ցնցուեց
և այնուհետև էլ չշարժուեց:


Անմիջապէս հրաւիրուած բժիշկը վկայեց որ արդէն մեռել է:

— Հանգուցեալը անբիշտ է ունեցել, — ասաց բժիշկը. — որպէսզի աչգալիսի ողբերգական վերջ չունենար, անհրաժեշտ էր հեռու պահել նրան ամեն տեսակ չափանքից:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	Եր.
1. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՏ	5
2. ԱՌԱՆՁԻՆ	9
3. ՎՐԷԺ	27





1973

1m.

2013

